ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀՐԱՄԱՆ

«09» սեպտեմբերի 2024թ № 4862-Ա

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/69/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԻՎԱՖԱՐՄ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության և 2-րդ մասի պահանջները, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը, ինչպես նաև այն, որ «Իվաֆարմ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ հայտում ներառվող շտկված իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացված է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/69/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան և սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/69/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրած «Իվաֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 08625799, գործունեության հասցեն՝ ք. Երևան, Գ. Շերամի 92/3) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 30-ին կայացած գնահատման և բացման նիստին ընդունված որոշման համաձայն՝ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

09.09.2024

X
ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՀԻ
Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100